ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՈՃԱԿԱՆ, ԺԱՆՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1990-ԱԿԱՆՆԵՐԻՆ

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մամուլի յուրահատկությունը, տարբերությունը հայրենի մամուլի նկատմամբ գլխավորապես նրանում է, որ այն իր ողջ պատմության ընթացքում ներկայանում է կուսակցական, քաղաքական գործիչների անհատական դիմագծերով, որոնց ընդհանրացված կերպարը ձևավորում է սփյուռքահայ մամուլի աշխարհայացքը, հեղինակությունը:

Սակայն մյուս կողմից հենց այդ հանգամանքը թույլ չէր տալիս մամուլի օրգաններին ինքնադրսևորվել որպես անկախ օբյեկտիվ լրատվամիջոցներ զերծ նեղ կուսակցական, հատվածական գաղափարներից: Ֆինանսավորվելով կուսակցական աղբյուրներից, ըստ էության լինելով նրա գաղափարական քարոզչական ամենահիմնական միավորը, հասարակական-քաղաքական մամուլը նաև հատվածական շահերի բախման հրապարակ է դառնում, որտեղ դրսևորվում են բոլոր տեսակի հակասությունները կուսակցությունների, առանձին շրջանակների միջև: Ահա այստեղ է, որ ի հայտ է գալիս սփյուռքահայ մամուլի ողջ հակասական բնույթը:

Համահայկական հիմնախնդիրների շուրջ գրեթե նույնական նպատակադրումներով հանդերձ, դրանց իրագործման ճանապարհները կոնկրետ սփյուռքահայ մամուլում մեղմ ասած շատ հարթություններում չեն համընկնում, ինչի արդյունքում ծնվում են փոխադարձ ծայրահեղ քննադատություններին տուրք տալու մղումները, որոնք սփյուռքահայ մամուլի ողջ պատմության ընթացքում խոչընդոտող գործոններ են հանդիսացել: Հենց իրենք՝ մամուլի միջոցներով արտահայտվող կուսակցական հրապարակախոսները խիստ օրինաչափ են համարում կուսակցական լրատվամիջոցների բևեռացվածությունը: Ահա թե ընդհանրապես քաղաքական մամուլի մասին ինչ կարծիքի է դաշնակցական գործիչ Խաժակ Տեր-Գրիգորյանը.

«Յիմարութիւն կը լիներ կուսակցական մամուլում տեղ տալ հակառակ, պաշտօնական տեսակետներին հակադրուող տեսակետներ պարզող յոդուածների: Յիմարութիւն այն իմաստով, որ խելօք մարդու գործ չէ սեփական ձեռքով քարոզչութիւն կատարել յօգուտ հակառակորդի կամ թշնամու:

Անշուշտ հակառակորդ ու թշնամի անձանց յոդուածները կարող են խելամիտ օգտագործումով ծառայել իբրև սեփական քարոզչութեան միջոց:

Ուստի խոսքի ու մտածումի ազատութեան խնդրով յոդուածների հրապարակումը կուսակցական մամուլով մերժելի է դառնում միայն ազատականութեան մոտեցումով, և ոչ առհասարակ»:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մամուլի յուրահատկություններից մեկն էլ կենտրոնական և տարածքային օրգանների միջև սերտ կապի պահպանումն է: Դրանք արտացոլվում են ոչ միայն կուսակցական որոշումների ու հայտարարությունների՝ բոլոր օրգաններում հրապարակման տեսքով, այլև «պաշտոնակիցների» աչքի ընկնող ու խոսուն խմբագրականների, հրապարակախոսական նյութերի ու հոդվածների տարածական տպագրությունների միջոցով: Այս կերպ, թերևս, մամուլի օրգանները փորձում են դինամիկ, ճկուն դարձնել գաղթօջախներում իրենց համակիրների, ընթերցողների և ընդհանրապես համայնքների միջև կապը, բոլորին տեղյակ պահել կուսակցական կենտրոնական մարմինների ընդունած որոշումներին, ձեռնարկած քայլերին: Մյուս կողմից տարածքային օրգանների վրա անուղղակիորեն խնդիր է դրվում քարոզչական ոլորտում ի կատար ածել ընդհանուր քաղաքականությունը՝ որը համայնքային կառույցները փորձում են կատարել յուրաքանչյուրը յուրովի, տեղայնացնելով լոկալ պայմաններում, հարմարեցնելով գաղթօջախների յուրահատկություններին:

Դա բավականին բարդ և նուրբ խնդիր է, ուստի պատահական չէ, որ կուսակցական մամուլի օրգանները, բոլոր ժամանակներում վստահվել են միմիայն համապատասխան գաղափարախոսության նվիրյալներին, կուսակցական «զինվորներին»: Այս հանգամանքը բացառություն չէ նաև լիբանանահայ իրականության համար: Սակայն պետք է նշել, որ ոչ կուսակցական մամուլը այս իմաստով առավելաբար շահում էր: Քանի որ անգամ այն դեպքերում, երբ վերջիններս (որոնք հիմնականում մշակութային ուղղվածություն ունեցող ամսագրերն են) խմբագրում են կուսակցական գործիչներ, ինչպես, ասենք, հանրաճանաչ «Նաիրին», որը Անդրանիկ Ծառուկյանից հետո խմբագրում է հնչակյան գործիչ Ժիրայր Նաիրին, պարբերականները չեն ծառայեցվում նեղ կուսակցական, հատվածական շահերի:

Սակայն լիբանանահայ հասարակական-քաղաքական մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բուն խմբագիրների կամ ինչպես սփյուռքում է ընդունված՝ խմբագրապետերի անհատականության պարագան մշտապես երկրորդական է համարվում, առաջնահերթորեն կարևորվում է օրգանների կուսակցություններին պատկանելիության հանգամանքը: Ահա թե ինչու թերթերն իրենց էջերում չեն նշում խմբագրապետի անունները, բացառությամբ այն դեպքերի, երբ լուսաբանում են իրենց խմբագիրների

գործունեությունը, արտահայտած մտքերը և այլն: Ըստ էության խմբագիրների փոփոխությունը զգալի է միայն արտաքնապես, տպագրվող հոդվածներում թեմատիկ ընդհանուր՝ առաջնահերթությունների որոշակի փոփոխություններով, ոճական առանձնահատկություններում տարբերվող նրբերանգներով: Եվ չնայած դրան, հիմնական քաղաքականությունը, դրանից բխող քարոզչական մարտավարությունը հիմնարար փոփոխությունների չի ենթարկվում, այսինքն լրատվամիջոցները երբևէ չեն շեղվում որդեգրած քարոզչական կուրսից:

Օրաթերթերը, որոնք բավականաչափ տարածված են գաղթօջախներում, թվում է թե բնականաբար ժանրային առումով շատ ավելի ազատ են, քան շաբաթաթերթերը, առավել ևս ամսագրերը: Սակայն չնայած մերթ ընդ մերթ հանդիպող լրատվական բնույթի հրապարակումներին լուրեր, ռեպորտաժներ, հաղորդագրություններ, թղթակցություններ, օրաթերթերում հիմնականում գերակշռում են ծավալուն հոդվածները, առավել ևս այնպիսիները, որոնք առընչվում են պատմության էջերը լուսաբանելուն, ժամանակի ընթացքում սեփական կուսակցության գործունեության, կատարած քայլերի պատճառահետևանքային կապերին, ինչպես նաև սփյուռքի և հայրենիքի հիմնախնդիրներին: Ըստ էության այն, ինչ բնորոշ է շաբաթաթերթերին և ամսագրերին: Շատ են նաև հարցազրույցները կուսակցական, հասարակական գործիչների հետ, որոնք սակայն հիմնականում ոչ թե տեղեկատվական բնույթ ունեն, այլ վերլուծական-քարոզչական:

Օրինակ, լիբանանահայ իրականության պայմաններում պաշտոնաթերթերը հանդիսանում են հենց օրաթերթերը, որոնք ժանրային առանձնահատկությունների առումով մինչև 90-ականները բավականին մոտ են միմյանց: Բոլորի մոտ էլ հոդվածները կարելի է ասել, հիմնարար, խորքային, վերլուծությունների ամբողջություն են ներկայացնում: Դրանով իսկ նրանք շաբաթաթերթերի և նույնիսկ ամսագրերի տպավորություն են թողնում: Խոսքը, իհարկե, վերաբերում է հիմնականում ազգային խնդիրների մասին հրապարակումներին, և ոչ ընդհանրապես: Խնդիրն այն է, որ օրաթերթերն իրենց էջերում լայն տեղ են հատկացնում նաև այլ՝ հիմնականում համապատասխան երկրի (որտեղ նրանք հանգրվանել են և գործունեություն ծավալել) քաղաքական, սոցիալական, տնտեսական կյանքին՝ կազմելով նրա առօրյա կյանքի մի հատվածը: Կոնկրետ Լիբանանի պարագայում հենց հայության համար առավելապես կարևորվում է Լիբանանում տիրող իրավիճակի լուսաբանումը հայկական օրաթերթերով, քանի որ հայկական տարրի հիմնական հարվածը չէր տիրապետում արաբերենին և բնականաբար չէր կարողանում

օգտվել արաբական լրատվամիջոցներից: Նրանց համար տեղեկատվության միակ հասանելի միջոցը մնում էին հայկական օրաթերթերը: Այս հանգամանքը լրջագույն ուշադրության է արժանանում հայկական օրաթերթերի կողմից և նրանք աշխատում են հնարավորինս մանրամասն տեղեկատվություն ապահովել գաղթօջախում: Ինչ վերաբերում է շաբաթաթերթերին և ամսագրերին, դրանք աշխատում էին հնարավորինս պահպանել ազգային դիմագիծը իրենց էջերում արծարծելով գրեթե բացառապես ազգային հիմնահարցեր: Այս առումով որոշակի վերապահում կարելի է անել շաբաթաթերթերի մասով, որոնք իրենց բնույթով սերտ առնչություններ ունեին օրաթերթերի հետ ևս: Պատահական չէ, որ սփյուռքահայ մամուլի պատմության ընթացքում այս կամ այն պատճառով շատ հաճախ օրաթերթերը փոխակերպվել են շաբաթաթերթերի և ընդհակառակը:

Լիբանանում վերջին երկու տիպի լրատվամիջոցները՝ շաբաթաթերթերը և ամսագրերը, ունեն հիմնականում գրական, մշակութային ուղղվածություն, ինչպիսիք են, ասենք, «Շիրակը», «Բագինը» և այլն: Դրանք շոշափում են սփյուռքահայ կյանքի, ինչպես նաև հայրենիք-սփյուռք մշակութային կապերի, դրանց մակընթացությունների ու տեղատվությունների զարկերակը:

Սկսած հատկապես 1986-87թթ.-ից, Խորհրդային Միությունում ծավալված դեմոկրատացման և վերակառուցման շարժման ակտիվացման շրջաններից, օրաթերթերի հարաբերությունները հայրենական մամուլի միջոցների հետ դառնում են ավելի ճկուն և դինամիկ: Նրանց հաջողվում է ամենօրյա լրատվություն ստանալ Հայաստանից՝ լրատվական գործակալությունների կամ սեփական թղթակիցների միջոցով: Այս շրջանից է, թերևս, սկսվում սփյուռքահայ մամուլի միջոցների միջև տարբերակման գործընթացը ըստ ժանրային յուրահատկությունների: Եթե մինչև այդ օրաթերթերի հրապարակումները շատ քիչ կողմերով էին տարբերվում շաբաթաթերթերի ոճից, ապա հատկապես 1988-ի հայրենական ազգային վերարթնացման ժամանակաշրջանից սկսած, սփյուռքահայ օրաթերթերում զգալի թարմացում է նկատվում:

Մինչև 1991թվականը, երբ սփյուռքում ակտիվորեն գործող ավանդական երեք կուսակցությունները դեռևս չէին գրանցվել Հայաստանում, նրանց ներկայությունը երկրում ընթացող գործընթացներին վստահաբար ապահովում էին նրանց լրատվական օրգանները, քանի որ հայրենական հատկապես մտավորականության շրջանում դրանք մեծ ընթերցող շրջանակներ ունեին: Այս շրջանից թեմատիկ ընտրությունների ոլորտում լիբանանահայ մամուլը նաև էական փոփոխություններ է կրում: Նախկին երկարահունչ հրապարակախոսական բնույթի հոդվածները իրենց տեղը զիջում էին կոնկրետ, լակոնիկ ոճով

գրված նյութերին, որոնք ավելի շատ պարունակում էին տեղեկատվություն, քան մեկնաբանություններ: Վերջիններս բխում էին կոնկրետ տեղեկատվությունից, ելնելով կոնկրետ իրավիճակային հարցադրումներից:

1991թ. փետրվարի 26-ին Հայաստանում լույս է տեսնում Ռամկավար Ազատական կուսակցության հովանավորյալ «Ազգ» օրաթերթի առաջին համարը: Իսկ մարտի 8-ին սկսում է լույս տեսնել նաև ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի պաշտոնաթերթ «Ազատամարտ»-ը: Կարճ ժամանակ անց Հայաստանում սկսում է հրատարակվել նաև ՍԴ Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթ «Հնչակ Հայաստանի»-ն: Հետագայում «Ազատամարտ»-ին փոխարինում է «Երկիր»-ը:

Այս փոփոխությունները աստիճանաբար իրենց էական ազդեցությունն են գործել նաև սփյուռքում լույս տեսնող մամուլի օրգանների վրա: Եթե մինչ այդ լիբանանյան օրգանները Հայաստանից լրատվությունն ստանում էին տարբեր լրատվամիջոցներից արտատպումների և գործակալությունների հաղորդագրությունների հաշվին, ապա հիմա իրենց կենտրոններն ունեին, որտեղից կանոնավոր լրատվություն էին ստանում: Այդ շրջանից սկսած լիբանանահայ մամուլում գրեթե արտատպումների չենք հանդիպում, իսկ եղածները հայրենիքի իրենց պաշտոնակիցներից էին: Կուսակցությունների մամուլի օրգանները Հայաստանում դառնում էին յուրօրինակ մամլո գործակալություններ, իսկ ՌԱԿ-ի պարագայում «Ազգ»-ին կից նույնիսկ գործում էր ՌԱԿ-ի մամուլի կենտրոնը, որից օգտվում էր սփյուռքի ռամկավարական մամուլը:

Որոշ ժամանակ անց, մոտավորապես 90-ականների կեսերից, տեղի են ունենում նոր տեղաշարժեր ևս: Աստիճանաբար ողջ քարոզչական-ինֆորմացիոն ցանցը մասնակիորեն դուրս է բերվում կուսակցական նեղ գաղափարախոսության շրջանակներից: Աստիճանաբար գրեթե մամուլի բոլոր օրգաններում նկատվում է լրագրողների և հրապարակախոսների սերնդափոխություն, որի արդյունքում ոլորտ մտած նոր հրապարակագիրները ավելի ու ավելի քիչ էին կուսակցությունների ազդեցության տակ ընկնում կամ փորձում էին այդպես ներկայանալ: Այս երևույթը բնականաբար թարմություն է մտցնում լրատվամիջոցներում, ստեղծում բազմակարծության հնարավորություն: Փաստորեն սփյուռքահայ հասարակական-քաղաքական մամուլը դիմափոխության մի տևական ընթացքի մեջ է ընկնում: Օրինակ «Դրօշակ»-ի հետագա տարիների համարները ուսումնասիրելիս նկատում ենք, որ հրապարակումներով հանդես եկողների մեծ մասը Հայաստանից են:

Այս փոփոխությունները ոչնչով չխոչընդոտեցին սփյուռքի օրգաններին սկզբունքային տեղաշարժերի չենթարկել այն քաղաքական գիծը, որը մշակվել և իրականացվում էր Հայաստանի իշխանությունների, անկախության գործընթացի և ԼՂ հիմնահարցի կարգավորման ոլորտներում:

1998թ. երկրորդ կեսից սկսած էական նոր փոփոխություններ են նկատվում լիբանանահայ մամուլի գործելաոճում: Ոչ միայն փոխվում են պարբերականների ժանրային նկարագրերը, այլև հետաքրքրությունների ընդհանուր միտումները: Պարբերականները որոշակիորեն թոթափվում են խիստ ազգային գաղափարներից: Միջազգային նորություններին հատկացված տեղերը 1997թ.-ից սկսած ավելի են ընդլայնվում, շատանում են Լիբանանի հասարակական կյանքին առնչվող նյութերը: Ժանրային առումով երկարահունչ, հրապարակախոսական հոդվածներին փոխարինում են կարճ լրատվությունները, թղթակցությունները, որոնք ավելի արդիական են դարձնում ավանդական, կուսակցական գաղափարներով կաղապարված պարբերականների համապատկերը:

Այդ փոփոխությունները ժամանակի պահանջ էին, որոնց անհրաժեշտությունը բխում էր սփյուռքի մամուլի գլխավոր առաքելության՝ հայապահպանության մոդեռնիզացումից: Բոլոր դեպքերում ակնհայտորեն կարելի է արձանագրել մեկ հստակ իրողություն. նշված ժամանակահատվածներում, որոնք առանձնանում են նաև դրանց ընթացքում լիբանանահայ լրատվամիջոցների ընդհանուր հետաքրքրությունների շրջանակների փոփոխություններով, սփյուռքահայ մամուլը մշտապես իր աշխարհայացքով մնում է հայակենտրոն: Այս կամ այն ոճով, լրագրային ժանրով արտահայտված բոլոր դիրքորոշումները՝ տվյալ ժամանակահատվածում արդարացված, թե ոչ, բխում էին միմիայն ազգային «շահի» իրենց պատկերացումներից, իսկ հակասությունները՝ միմիայն ճիշտ ճանապարհի, զարգացման ուղու փնտրտուքներից, և հաճախ փոխհարաբերությունները անհանդուրժողականության են հասնում ոչ թե միմյանց գոյությունը ավելորդ համարելու տրամադրվածությունից, այլև հստակ, բոլորի համար ընդունելի ծրագրային գաղափարախոսության բացակայությունից: Իսկ տվյալ պայմաններում սփյուռքահայ հասարակական-քաղաքական մամուլը, որը սփյուռքի ողջ իրականության հայելին էր, չէր կարող այլ պատկեր ներկայացնել: